

*ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման
համապետական հանձնաժողովի հիստ*

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

**ՀՀ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ
ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԸՆԹԱՑՔԸ**

ԱՄՓՈՓՎԱԾ 18.04.2011թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ 2011թ. մարդահամարի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի պատրաստվածության վիճակը

- ՀՀ **2011**թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման գործառույթների կանոնակարգման և իրականացման համար անհրաժեշտ թվով **66** փաստաթղթերից **46**-ն արդեն իսկ հաստատվել են ՀՀ ՎՊԽ նորմատիվ և անհատական որոշումներով (համապատասխանաբար՝ **5** և **41** փաստաթուղթ):
- Նորմատիվ որոշումներով հաստատված իրավական ակտերը գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել ՀՀ ԳՆԱՏ-ներում:
- Նախապատրաստական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ հրահանգները, ցուցումները, ձևաթղթերը, ինչպես նաև տվյալների մշակման նպատակով կիրառվելիք դասակարգիչներն ու ծածկագրման ձեռնարկները տպագրված են անհրաժեշտ տպաքանակով:


ՀՀ 2011թ. Մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքների համար անհրաժեշտ սխեմատիկ հատակագծերի առկայությունը

	Ընդամենը	Քաղաքային համայնքներ	Երևանի վարչական շրջաններ	5000+ գյուղեր
Ընդամենը անհրաժեշտ է (միավոր)	97	48	12	37
Ճշգրտված սխեմատիկ հատակագծեր	35	26	3	6
Ընթացքի մեջ է պատրաստման գործընթացը	14	13	1	-
Առկա են ֆինանսական միջոցներ և կպատրաստվեն	9	7	2	-
Ֆինանսավորում առկա չէ	39	2	6	31


ՀՀ 2011 թ. մարդահամարի նախապատրաստմանն ու անցկացմանն ուղղված աշխատանքներ

1. Ընթացքի մեջ է ՁԵՎ ԹԻՎ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթի և դրա լրացման հրահանգի տրամադրումը հաշվետու կազմակերպություններին:
ՀՀ-ում, ըստ ընթացիկ վիճակագրական հաշվառման տվյալների, 01.01.2010 թ. դրությամբ հաշվառված են 21.750 բազմաբնակարան շենքեր, որոնց վերաբերյալ բնակարանային ֆոնդի սեփականատերերից պետք է ստացվեն` շենքի շահագործման հանձնման տարեթվի, արտաքին պատերի շինանյութի և դրանցում յուրաքանչյուր բնակարանի ընդհանուր մակերեսի վերաբերյալ տեղեկատվությունն ըստ վերոնշյալ դիտարկման հարցաթերթի:

2. Դիմել ենք ՀՀ պաշտպանության նախարարությանն իրենց տնօրինության (ենթակայության) տակ գտնվող ՀՀ որոշ քաղաքային և գյուղական համայնքներում գտնվող յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար ՁԵՎ ԹԻՎ 1-ԲՆԱԿԲՆՈՒԹԱԳԻՐ «Բազմաբնակարան շենքի բնակարանների (կացարանների) բնութագրի վերաբերյալ» պետական վիճակագրական դիտարկման լրացված հարցաթերթի և բազմաբնակարան շենքում բնակարանների քանակի և բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալների տրամադրման հարցում աջակցության խնդրանքով (ս.թ. սպրիլի 8-ին ՀՀ ԱՎԾ թիվ 24-01-02-490 գրությամբ հարցաթերթերն ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն):



3. Մշակվել է ՀՀ 2011 թ. մարդահամարի ժամանակ օտարերկրյա պետություններում (միջազգային կազմակերպություններում)՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելություններում, հյուպատոսություններում և ներկայացուցչություններում աշխատող ՀՀ քաղաքացիների և իրենց հետ օտարերկրյա պետություններում ապրող ընտանիքի անդամների, ինչպես նաև ՀՀ-ում՝ օտարերկրյա պետությունների դեսպանատների և դիվանագիտական առաքելությունների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցչություններում աշխատող օտարերկրյա քաղաքացիների և իրենց հետ ապրող ընտանիքի անդամների հաշվառման կարգը սահմանող համապատասխան իրավական փաստաթղթի նախագիծը (ս.թ. սպրիլի 8-ին ՀՀ ԱՎԾ թիվ 24-01-03-491 գրությամբ կարգի նախագիծն ուղարկվել է ՀՀ արտաքին գործերի նախարարություն):



4. Մշակվել է ՀՀ 2011 թվականի մարդահամարի ժամանակ փակ տարածքներում գտնվող բնակչության առանձին խմբերի հաշվառման կարգը սահմանող համապատասխան իրավական փաստաթուղթի նախագիծը: Ներկայումս այն գտնվում է` ՀՀ պաշտպանության, ՀՀ արդարադատության նախարարությունների, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության հետ համաձայնեցման փուլում:

5. ՀՀ 2011թ. մարդահամարի ընթացքում գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանցում տնային տնտեսությունների ցուցակների կազմում, որը ՀՀ 866 գյուղական համայնքներում կիրականացվեն գյուղական համայնքների ղեկավարների աշխատակազմի քարտուղարների կողմից:

6. ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման ընթացքում ՀՀ քաղաքներում և 5000 ու ավել բնակչություն ունեցող խոշոր գյուղերում կիրականացնեն տների (շինությունների) ցուցակների կազմում, 1 ամիս ժամկետով ներգրավված 660 ցուցակագրողների կողմից, 2011թ. հունիսին:

▶ 7. ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագիրը (հարցաշարը) հավանության ստանալու ակնկալիքով ներկայացվել է ՀՀ 2011թ. մարդահամարի համապետական հանձնաժողովի քննարկմանը: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա այն կհաստատվի ՀՀ վիճակագրության պետական խորհրդի կողմից և կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը (համաձայն Մարդահամարի մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետի)՝ մինչև ս.թ. հունիսի վերջ:

▶ 8. ՀՀ քաղաքների սահմանների ճշգրտման, փոփոցների անվանումների, թաղամասերի և տների համարակալման կարգավորման, համարանիշերի և անվանացույցերի տեղադրման գործընթացի ապահովման ուղղությամբ գործառույթների իրականացում: *Ի կատարումն ՀՀ կառավարության 2009թ. մարտի 26-ի թիվ 301-Ն որոշման 5-րդ կետի, ակնկալվում է ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման ք. Երևանի և մարզային հանձնաժողովներին հանձնարարականներ :*